

Կազմված է 07.02.2020 թ. և բաղկացած է 26 թերթից

Տպագրված է ընդամենը 2 օրին

ՕՐԻՆԱԿ 1

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ս Է

«ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱԿԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

հոգաբարձուների խորհրդի

20.12.2019 թ. կայացած նիստի
որոշմամբ

(արձանագրություն թիվ 8)

Հիմնադրամի տնօրեն՝

Վ. Հարությունյան



[Handwritten signature]

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ս Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 22.02.2017 թ.

գրանցման համար 22.160.971169

ՀՎՀՀ՝ 00005614

22.02.2017 թ. գրանցված կանոնադրությու

թիվ 001.2 փոփոխությունը գրանցված է

իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից "21" 02.2020 թ.



աջնատակից՝

[Handwritten signature]

**«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»**

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրություն)

2020 թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ԲՊՀ) հիմնադրի որոշմամբ հիմնադրված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

2. ԵՊՀՀ -ն «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 286.210.04950) իրավահաջորդն է՝ փոխանցման ակտին համապատասխան: «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան» հիմնարկի (պետական գրանցման համարը՝ 286.0002) իրավահաջորդը:

3. ԲՊՀ-ն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերին, միջազգային պայմանագրերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

4. ԲՊՀ-ի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է (այսուհետ՝ լիազոր մարմին):

5. ԲՊՀ-ի անվանումն է՝

- 1) հայերեն լրիվ՝ «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ.
- 2) հայերեն կրճատ՝ «ԲՊՀ» հիմնադրամ.
- 3) ռուսերեն լրիվ՝ фонд «Государственный университет им. В. Брюсова».
- 4) ռուսերեն կրճատ՝ фонд «ГУ им. В. Брюсова».
- 5) անգլերեն լրիվ՝ «BRUSOV State University» Foundation.
- 6) անգլերեն կրճատ՝ «BSU» Foundation»:

6. ԲՊՀ-ի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, 0002, Թումանյան 42:

II. ԲՊՀ-Ի ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

7. ԲՊՀ-ն իրավաբանական անձ է և ստեղծված է համարվում պետական գրանցման պահից:

8. ԲՊՀ-ն Հայաստանի Հանրապետությունում և դրանից դուրս կարող է ստեղծել մասնաճյուղեր ու ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ, որոնք գործում են ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված կանոնադրություններին համապատասխան:

9. ԲՊՀ-ն ունի առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում, կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

10. ԲՊՀ-ն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

11. ԲՊՀ-ի գործունեության ընթացքում ստացված ամբողջ եկամուտը և շահույթը պետք է օգտագործվեն նրա կանոնադրական նպատակների իրականացման համար:

12. ԲՊՀ-ն իր կանոնադրությանը համապատասխան՝

1) օգտագործում է հիմնադրի կողմից ԲՊՀ-ին տրամադրված գույքը.

2) տնօրինում, օգտագործում և տիրապետում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

13. ԲՊՀ-ն կարող է ունենալ իր անվամբ, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կլոր կնիք՝ հայերենով, ռուսերենով և անգլերենով, դրոշմակնիք, ձևաթղթեր, ինչպես նաև անհատականացնող այլ միջոցներ:

14. ԲՊՀ-ի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում:

15. Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում ԲՊՀ-ի պարտավորությունների համար, իսկ ԲՊՀ-ն պատասխանատվություն չի կրում իր հիմնադրի պարտավորությունների համար: ԲՊՀ-ն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող գույքով:

III. ԲՊՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

16. ԲՊՀ-ի նպատակն է՝

1) դառնալով բարձրագույն կրթության համաեվրոպական տարածքի մաս՝ անմիջականորեն արձագանքել հասարակության զարգացման սկզբունքորեն նոր միջավայրի ստեղծման գործընթացներին, ինչը ենթադրում է կրթությունը ծառայեցնել սոցիալական և տնտեսական զարգացման, կրթության որակի՝ աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխանեցնելուն, մարդկային ընդհանրական արժեքների զարգացման հիմնախնդիրների լուծմանը.

2) լինել ազգային կրթական համակարգի մաս կազմող, գիտահեն հասարակության, աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող անհատի մտավոր, քաղաքացիական, բարոյական որակների ձևավորմանը նպաստող կրթական միավոր.

3) դառնալ մարդասիրական արժեքների, մշակութային հաղորդակցման, հասարակագիտական և լեզվաբանական կրթության նորագույն ուղղությունների հետազոտական մեթոդների ուսումնասիրության և կիրառման օջախ:

17. ԲՊՀ-ի խնդիրներն են՝

1) անձի մտավոր, հոգևոր և բարոյական զարգացման պահանջմունքների բավարարումը՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու միջոցով.

2) գիտության տարբեր բնագավառներում գիտական, ուսումնամեթոդական և գիտամանկավարժական հետազոտությունների իրականացումը, հայագիտության բազմակողմանի զարգացումը.

3) գիտության, կրթության, տնտեսության զարգացումը՝ գիտամանկավարժական աշխատողների ու սովորողների գիտական հետազոտությունների և ստեղծագործական գործունեության միջոցով, ստացված արդյունքների օգտագործումը տնտեսության մեջ, հետազոտական և կրթական գործընթացներում.

4) բարձրագույն կրթությամբ գիտամանկավարժական աշխատողների պատրաստումը և վերապատրաստումը.

5) կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի ներդրումը.

6) կրթության և գիտության ինտեգրման հիման վրա ուսուցման բովանդակության կատարելագործումը, նոր և հեռանկարային մասնագիտությունների ու մասնագիտացումների համակարգերի մշակումը և արմատավորումը.

7) կրթական գործընթացի անընդհատության, թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

8) սովորողին ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակելը.

9) գիտելիքի տարածումը, սովորողի կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը.

10) ժողովրդավարական և քաղաքացիական հասարակության կառավարման պայմաններում սովորողների քաղաքացիական դիրքորոշման, աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը.

11) սովորողների ու աշխատողների առողջության պահպանման, կենցաղի, սննդի, հանգստի, ֆիզիկական և հոգևոր զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

18. ԲՊՀ-ն կարող է անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

1) հանրակրթական, նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական, լրացուցիչ կրթության կազմակերպում.

2) օտարերկրյա դիմորդների նախապատրաստական կրթության կազմակերպում.

3) մշակույթի բնագավառում կրթական գործունեության իրականացում.

4) գիտամանկավարժական կադրերի պատրաստում, վերապատրաստում, որակավորման բարձրացում.

5) գիտական հետազոտությունների և մշակումների իրականացում.

6) փորձարարական, փորձագիտական ծառայությունների մատուցում.

7) գիտահետազոտական և գիտաարտադրական աշխատանքների իրականացում, դրանց արդյունքների առևտրայնացում.

8) խորհրդատվական, փորձագիտական ծառայությունների մատուցում.

9) հրատարակչական, տպագրական գործունեության ծավալում, դրա արդյունքների իրացում, գրքերի և տպագրական այլ նյութերի վաճառքի իրականացում.

10) իր կողմից հրատարակվող տպագիր և էլեկտրոնային միջոցներով գովազդի իրականացում.

11) կրթական և ուսումնական վճարովի դասընթացների կազմակերպում.

12) միջազգային ուսումնական և գիտատեխնիկական ծրագրերի իրականացում.

13) աշխատողների և սովորողների հանրային սննդի, հանգստի, կենցաղի կազմակերպում ու սպասարկում:

19. ԲՊՀ-ում չեն թույլատրվում հասարակական-քաղաքական, հասարակական և կրոնական կազմակերպությունների, դրանց կազմակերպական կառույցների ստեղծումն ու գործունեությունը՝ բացառությամբ արհեստակցական, մասնագիտական, մշակութային, մարզական և շրջանավարտների կազմակերպությունների:

IV. ԲՊՀ-Ի ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

20. ԲՊՀ-ի շահառուները կրթական, գիտական, մշակութային, գիտաարտադրական բնագավառներում գործող ֆիզիկական ու իրավաբանական անձինք են:

V. ԲՊՀ-Ի ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21. ԲՊՀ-ն իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

1) իրականացնելու բարձրագույն, հետբուհական կրթություն, հանրակրթական, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և լրացուցիչ կրթության ծրագրեր.

2) որոշելու իր կառուցվածքը, կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման կարգը, օրենքով սահմանված կարգով ստեղծելու, վերակազմակերպելու և լուծարելու ֆակուլտետներ, ամբիոններ, գիտահետազոտական ինստիտուտներ, կենտրոններ, քոլեջներ, ավագ դպրոցներ, այլ կառուցվածքային ստորաբաժանումներ, ինչպես նաև ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ լինելու դրանց մասնակիցը.

3) կազմակերպելու բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի մշակումն ու հաստատումը, ուսումնական գրականության և ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակումը.

4) ինքնուրույն որոշելու ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական տեխնոլոգիաների և սովորողների ընթացիկ ատեստավորման ձևերի, կարգի ու պարբերականության ընտրության հարցերը.

5) ըստ կրթական ծրագրերի՝ կազմակերպելու դիմորդների, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը և ուսումնական գործընթացը.

6) կազմակերպելու մասնագետների որակավորման բարձրացման, վերապատրաստման և լրացուցիչ կրթության այլ ծրագրեր.

7) ինքնուրույն որոշելու բոլոր տարակարգերի աշխատողների հաստիքացուցակը, իրականացնելու աշխատողների ընտրությունը, նշանակումը, բաշխումը և ատեստավորումը՝ ներառյալ գիտամանկավարժական համակազմի համալրումը, պրոֆեսորադասախոսական համակազմի, գիտական և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնների զբաղեցման կարգերը.

8) մշակելու ընտրովի պաշտոնների ու պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության ընթացակարգերը և անցկացնելու նրանց ընտրությունները.

9) սահմանելու և շնորհելու ԲՊՀ-ի պատվավոր կոչումներ, շքանշաններ, մեդալներ, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ, անվանակոչելու լսարաններ, ստորաբաժանումներ, անկյուններ.

10) իրականացնելու հրատարակչական, տպագրական գործունեություն.

11) իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա երկկողմանի ու բազմակողմանի կապեր իրականացնելու հանրապետության և օտարերկրյա համալսարանների, գիտական հիմնարկների, պետական մարմինների, այլ կազմակերպությունների, հաստատությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ, կատարելու տարատեսակ աշխատանքներ (մասնագետների պատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում՝ ուսուցման բոլոր ձևերով, ուսանողների և ասպիրանտների ուսուցում, մասնագետների փոխանակում, գիտական, մշակութային-լուսավորչական և այլ գործունեություն, գիտական խորհրդակցությունների ու արշավախմբերի կազմակերպում և այլն), օտարերկրյա պետություններում ստեղծելու ստորաբաժանումներ և այլն.

12) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալու տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.

13) օգտագործման իրավունքով իրեն ամրացված գույքը հանձնելու վարձակալության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, կտրամադրվի կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ հիմնադրամին փոխանցելու համար.

(փոփոխությունը կատարված է ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի 16.11.2020թ. կայացած նիստի որոշմամբ (արձանագրություն թիվ 7) և գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 26.11.2020թ.):

14) կառավարելու իր ֆինանսները, ինքնուրույն որոշելու ֆինանսական իր միջոցների օգտագործման ուղղությունները՝ ներառյալ աշխատողների

վարձատրության և նյութական խրախուսման կարգը և չափերը, սահմանելու կրթաթոշակներ:

15) իրականացնելու օրենքով և իր կանոնադրությամբ չարգելված այլ գործունեություն:

22. ԲՊՀ-ն պարտավոր է՝

1) գործել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին, ինչպես նաև իր կանոնադրությանը համապատասխան:

2) հրապարակել իր գործունեության մասին ամենամյա հաշվետվություն, օրենքով նախատեսված դեպքում՝ նաև ֆինանսական հաշվետվությունների աուդիտի եզրակացությունը:

3) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում:

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ:

5) ապահովել սույն կետում նշված հաշվետվություններին ծանոթանալու մատչելիությունը:

6) իրականացնել օրենքով սահմանված այլ պարտավորություններ:

VI. ԲՊՀ-Ի ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

23. ԲՊՀ-ն կառավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան՝ ինքնակառավարման հիման վրա, միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ՝ հիմնադրի, լիազոր մարմնի, ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի, ԲՊՀ-ի գիտական խորհրդի և ռեկտորի գործառույթների իրականացմամբ:

24. ԲՊՀ-ն իր գործունեությունն իրականացնում է կառավարման իր մարմինների միջոցով:

25. ԲՊՀ-ի կառավարման մարմիններն են՝

1) հոգաբարձուների խորհուրդը:

2) տնօրենը (այսուհետ՝ ռեկտոր):

26. ԲՊՀ-ի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Հոգաբարձուների խորհուրդը ձևավորվում է ԲՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի, սովորողների, հիմնադրի և լիազոր մարմնի ներկայացուցիչներից: ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհուրդի անդամների թիվը 20 է:

(փոփոխությունը կատարված է ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի 07.10.2021թ. կայացած նիստի որոշմամբ (արձանագրություն թիվ 6) և գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 20.10.2021թ.):

27. ԲՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմից հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ԲՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումները: ԲՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումներից առաջադրված թեկնածուներն ընտրվում են ԲՊՀ-ի գիտական խորհրդում և ներկայացվում լիազոր մարմին: Պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված

հոգաբարձուների խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը:

28. ԲՊՀ-ի սովորողների ներկայացուցիչներից հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ֆակուլտետների, մասնաճյուղերի ուսանողական խորհուրդները: Ուսանողական խորհրդի նախագահությունն ընտրում է ֆակուլտետներից առաջադրված սովորողների թեկնածուներին և ներկայացնում լիազոր մարմին: Սովորողների կողմից ընտրված հոգաբարձուների խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը և խորհրդի անդամի լիազորություններն իրականացնում են ԲՊՀ-ում իրենց սովորելու ժամանակահատվածում:

29. Հիմնադրի անունից հոգաբարձուների խորհրդի անդամներ է առաջադրում Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանցից (խորհրդի կազմի 25 տոկոսը):

(փոփոխությունը կատարված է ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի 07.10.2021թ. կայացած նիստի որոշմամբ (արձանագրություն թիվ 6) և գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 20.10.2021թ.):

30. Լիազոր մարմնի կողմից հոգաբարձուների խորհրդի անդամներ են առաջադրվում կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և տնտեսության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ (խորհրդի կազմի 25 տոկոսը):

(փոփոխությունը կատարված է ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի 07.10.2021թ. կայացած նիստի որոշմամբ (արձանագրություն թիվ 6) և գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 20.10.2021թ.):

31. Առաջադրված անձանց թեկնածությունների հիման վրա հոգաբարձուների խորհրդի կազմը, լիազոր մարմնի ներկայացմամբ, հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

32. Հոգաբարձուների խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք, ովքեր չեն կարող լինել ԲՊՀ-ի այլ մարմնի անդամներ:

33. Հոգաբարձուների խորհրդի նախագահին ընտրում են հոգաբարձուների խորհրդի անդամները՝ խորհրդի անդամների կազմից (բացի սովորողների ներկայացուցիչներից), հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

34. ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով: Հոգաբարձուների խորհրդի անդամների համար կարող է սահմանվել փոխհատուցում՝ նրանց այն ծախսերի համար, որոնք կապված են հոգաբարձուների խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է հոգաբարձուների խորհուրդը:

35. Հոգաբարձուների խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

1) ներկայացնելու առաջարկություններ հոգաբարձուների խորհրդի նիստի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.

2) նախապատրաստելու և հոգաբարձուների խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ, որոշումների նախագծեր.

3) ստանալու տեղեկություններ ԲՊՀ-ի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի մասին.

4) ստանալու իրենց պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

36. Հոգաբարձուների խորհրդի անդամները պարտավոր են՝

1) մասնակցել հոգաբարձուների խորհրդի նիստերին.

2) իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով ԲՊՀ-ի շահերից:

37. Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝

1) իր դիմումի համաձայն.

2) լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում.

4) եթե դադարել են ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսի կամ կեսից ավելիի լիազորությունները.

5) եթե նա նշանակվել է ի պաշտոնե՝ նրա զբաղեցրած պաշտոնին այլ անձ նշանակելու կամ նրա զբաղեցրած պաշտոնի վերացման դեպքում.

6) խորհրդի անդամի կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով.

7) խորհրդի անդամի մահվան դեպքում:

38. Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով՝ ոչ ուշ, քան հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին ռեկտորի ծանուցումն ստանալու օրվանից հետո 30 օրվա ընթացքում: Հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում ռեկտորը դրա մասին տեղեկացնում է հիմնադրին, հոգաբարձուների խորհրդի անդամներին նշանակած անձանց կամ մարմիններին, ԲՊՀ-ի մարմիններին:

39. Հոգաբարձուների խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են տարեկան առնվազն մեկ անգամ՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից: Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև հոգաբարձուների խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացվելուց հետո 30 օրվա ընթացքում: Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են անցկացվել տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով: Հոգաբարձուների խորհրդի որոշումներն ընդունվում են օրենքով սահմանված կարգով: Հոգաբարձուների խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ հոգաբարձուների խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Եթե հոգաբարձուների խորհրդի նիստում քննարկվում է խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

40. Խորհրդի նիստերն արձանագրվում են:

41. Հոգաբարձուների խորհրդի իրավասություններն են՝

- 1) իր աշխատակարգի հաստատումը.
 - 2) ռեկտորի ընտրության կանոնակարգի մշակումը, հաստատումը, ընտրության կազմակերպումը, ռեկտորի ընտրության և լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.
 - 3) ռեկտորի տարեկան հաշվետվության լրումն ու գնահատումը.
 - 4) ԲՊՀ-ի գործունեության տարեկան և ռազմավարական ծրագրերի հաստատումը.
 - 5) հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) այլ ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.
 - 6) ԲՊՀ-ի կառուցվածքի հաստատումը.
 - 7) ԲՊՀ-ի հաստիքացուցակի հաստատումը.
 - 8) ԲՊՀ-ի բյուջեի և դրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների ու ԲՊՀ-ի գործունեության մասին տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի հաստատումը.
 - 9) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշման ընդունումը.
 - 10) ԲՊՀ-ի գործունեության, այդ թվում՝ ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունը, ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող անձի ընտրության արդյունքների հաստատումը.
 - 11) հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.
 - 12) ռեկտորի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող հրամանների, հրահանգների և ցուցումների կասեցումը կամ դրանք ուժը կորցրած ճանաչելը.
 - 13) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.
 - 14) ԲՊՀ-ի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը.
 - 15) ԲՊՀ-ի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի և լուծարման հաշվեկշռի հաստատումը.
 - 16) ԲՊՀ-ի կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը.
 - 17) ԲՊՀ-ի գույքի տնօրինման կարգի հաստատումը.
 - 18) 25 մլն դրամի կամ դրան համարժեք այլ արտարժույթի սահմանաչափը գերազանցող պայմանագրերի հաստատումը՝ բացառությամբ բանկային ավանդի և ծախսային ելքեր չպահանջող այլ պայմանագրերի:
(փոփոխությունը կատարված է ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի 11.10.2022թ. կայացած նիստի որոշմամբ (արձանագրություն թիվ 4) և գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 02.12.2022թ.):
 - 19) օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև հիմնադրամի մյուս մարմիններին օրենքով չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:
42. Հոգաբարձուների խորհրդի իրավասությանը պատկանող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

43. Հոգաբարձուների խորհուրդն իրավունք ունի ծանոթանալու ԲՊՀ-ի բոլոր փաստաթղթերին:

44. Հոգաբարձուների խորհրդի նախագահը՝

1) իրավիք ունի հոգաբարձուների խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.

2) ստորագրում է հոգաբարձուների խորհրդի որոշումները.

3) կարող է ստեղծել հանձնախմբեր և նշանակել դրանց նախագահներին, մասնավորապես, ԲՊՀ-ի՝ սույն կանոնադրությամբ նախատեսված ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման (ստուգում, ուսումնասիրում և այլն) և սույն կանոնադրության 41-րդ կետի 8-րդ, 9-րդ, 16-րդ ու 17-րդ ենթակետերով նախատեսված հարցերի նախնական քննարկում իրականացնելու և դրանց վերաբերյալ հոգաբարձուների խորհուրդ եզրակացություններ (տեղեկանքներ) ներկայացնելու համար.

4) կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի նիստերի արձանագրության վարումը.

5) հոգաբարձուների խորհրդի քննարկմանն է ներկայացնում հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծը՝ օրենքով նախատեսված դեպքերում.

6) ԲՊՀ-ի անունից ռեկտորի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր:

45. Հոգաբարձուների խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, կատարում է հոգաբարձուների խորհրդի անդամներից մեկը:

46. ԲՊՀ-ի գիտական խորհուրդը (այսուհետ՝ գիտական խորհուրդ) ձևավորվում է սույն կանոնադրության համաձայն: Այն ԲՊՀ-ի ուսումնամեթոդական, գիտահետազոտական ու գիտատեխնիկական գործունեությունը պլանավորող, համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին է:

47. Գիտական խորհուրդը գործում է ռեկտորի նախագահությամբ: Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Գիտական խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում՝ առնվազն 8 անգամ:

48. Գիտական խորհուրդը՝

1) հաստատում է իր կանոնակարգը.

2) ռեկտորի ներկայացմամբ՝ հոգաբարձուների խորհրդին ներկայացնում է առաջարկություն կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու, լուծարելու վերաբերյալ.

3) հատկացված ընդհանուր չափաքանակների շրջանակներում քննարկում և ընդունում է որոշումներ ԲՊՀ-ի՝ ըստ կրթական ծրագրերի և մասնագիտությունների ընդունելության վերաբերյալ.

4) հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները (այդ թվում՝ օրինակելի), ԲՊՀ-ի և կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական գործունեությունը և ուսումնական գործընթացը կանոնակարգող ներքին իրավական այլ ակտեր.

5) քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը՝ ըստ մասնագիտությունների.

6) քննարկում է բուհի գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ ԲՊՀ-ում կատարվող

կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին.

7) ընդունում է պատվավոր կոչումներ շնորհելու, մրցանակներ, անվանական և այլ կրթաթոշակներ տալու, ԲՊՀ-ի շքանշանով և մեդալով պարգևատրելու, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար թեկնածություններ ներկայացնելու, լսարաններ, ստորաբաժանումներ, անկյուններ անվանակոչելու մասին որոշումներ.

8) հաստատում է ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների, դասախոսների, պրոֆեսորների, դոցենտների և այլ ընտրովի պաշտոնների ընտրության կարգերը և իրականացնում է ընտրության արդյունքների հաստատումը.

9) շնորհում է գիտական կոչումներ, հաստատում ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական համակազմի թափուր պաշտոնների տեղակալման մրցույթների արդյունքները.

10) ԲՊՀ-ի գործունեության բնագավառներին, նպատակներին և խնդիրներին համապատասխան լիազոր մարմին է ներկայացնում առաջարկություններ ԲՊՀ-ի գործունեության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ նոր մասնագիտություններով կրթական ծրագրեր ներդնելու և իրականացնելու վերաբերյալ.

11) քննարկում և հրատարակության է երաշխավորում մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ժողովածուներ և այլ նյութեր.

12) ըստ անհրաժեշտության ստեղծում է գիտական խորհրդին կից գործող մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, սահմանում դրանց կառուցվածքը, կազմերի ձևավորման կարգը և աշխատակարգը.

13) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և սույն կանոնադրությունից բխող այլ լիազորություններ.

14) քննարկում և հաստատում է ըստ մասնագիտությունների ուսման վարձավճարի չափը:

49. Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել 60-ը, որի առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են:

50. Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը, որը գիտական խորհրդի նախագահն է, պրոռեկտորները, ռեկտորի աշխատակազմի ղեկավարը, գիտական քարտուղարը, ուսումնական գործընթացի համակարգման և կազմակերպման բաժնի պետը, ֆակուլտետների դեկանները, ամբիոնների վարիչները, արհեստակցական կազմակերպության նախագահը, գրադարանի տնօրենը, ըստ նպատակահարմարության այլ վարչական ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև ընտրովի անդամներ: Գիտական խորհրդի ընտրովի անդամների թեկնածություններն առաջադրվում և ընտրվում են ԲՊՀ-ի գիտաուսումնական ստորաբաժանումների կողմից: ԲՊՀ-ի գիտական խորհրդի անդամների թվի 25 տոկոսը սովորողներն են, որոնց առաջադրում են համապատասխան ֆակուլտետների ուսանողական խորհուրդները, իսկ ընտրությունն իրականացնում է ԲՊՀ-ի ուսանողական խորհրդի նախագահությունը:

51. Գիտական խորհրդի նիստը համարվում է իրավազոր նրա անդամների 2/3-ի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի

անդամների ծայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե որոշում չի ընդունվում փակ, գաղտնի քվեարկության մասին: Գիտական խորհրդի նիստերը կարող են անցկացվել տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով:

52. Գիտական խորհրդի արտահերթ նիստերը կարող են հրավիրվել գիտական խորհրդի նախագահի առաջարկով, ինչպես նաև գիտական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով: Գիտական խորհրդի նախագահն արտահերթ նիստ հրավիրելու վերաբերյալ պահանջն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պարտավոր է ապահովել նիստի գումարումը:

53. ԲՊՀ-ի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է ռեկտորը: Ռեկտորն իր իրավասության սահմաններում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու սույն կանոնադրությանը համապատասխան, գործում է միանձնյա:

54. Ռեկտորի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրով:

55. ԲՊՀ-ի ռեկտորը՝

1) ղեկավարում է ԲՊՀ-ի կրթական, գիտական, արտադրական, տնտեսական, ֆինանսական, միջազգային և այլ բնույթի գործունեությունը.

2) կազմակերպում է ԲՊՀ-ի գիտական խորհրդի, կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքները՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը.

3) հրավիրում է ԲՊՀ-ի գիտական խորհրդի, ռեկտորատի նիստերը.

4) տարեկան հաշվետվություն է ներկայացնում ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդին.

5) ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում տարեկան բյուջեի նախագիծը, զարգացման ռազմավարական ծրագրերը, ԲՊՀ-ի կանոնադրության կամ դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին որոշումների նախագծերը, ԲՊՀ-ի կառուցվածքը և հաստիքացուցակը.

6) կազմակերպում և ապահովում է ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի և գիտական խորհրդի որոշումների կատարումը.

7) ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու կամ լուծարելու վերաբերյալ նախագծեր.

8) ԲՊՀ-ի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները (այդ թվում՝ օրինակելի), կանոնակարգերը, այլ ներքին իրավական ակտեր.

9) սույն կանոնադրությանը համապատասխան՝ կազմավորում է ԲՊՀ-ի գիտական խորհուրդը և կառուցվածքային ստորաբաժանումների կոլեգիալ կառավարման մարմինները, սահմանում է աշխատողների լիազորությունները, պաշտոնական պարտականությունները.

10) արձակում է ուսանողների ընդունելության, հեռացման, վերականգնման, համապատասխան արձակուրդ ձևակերպելու, խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր կիրառելու, որակավորման աստիճան շնորհելու,

սովորողներին նպաստ հատկացնելու և ԲՊՀ-ի գործունեությանը վերաբերող այլ հրամաններ, կարգադրություններ, տալիս հանձնարարականներ.

11) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում պրոռեկտորներին, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, որոշում նրանց գործունեության ոլորտները և իրավասությունը.

12) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է տնտեսական ընկերությունների, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների տնօրեններին, նրանց հետ կնքում աշխատանքային պայմանագրեր.

13) աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր, կազմակերպում է աշխատողների ատեստավորումը.

14) աշխատանքային պայմանագրեր է կնքում ընտրված դեկանների, ամբիոնների վարիչների և գիտամանկավարժական համակազմի, աշխատողների հետ.

15) ԲՊՀ-ի անունից կնքում է պայմանագրեր, իսկ 25 մլն դրամի կամ դրան համարժեք այլ արտարժույթի սահմանաչափը գերազանցող պայմանագրերը՝ հոգաբարձուների խորհրդի հաստատման հիման վրա՝ բացառությամբ բանկային ավանդի և ծախսային ելքեր չպահանջող այլ պայմանագրերի:

(փոփոխությունը կարարված է ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի 11.10.2022 թ. կայացած նիստի որոշմամբ (արձանագրություն թիվ 4) և գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 02.12.2022թ.):

16) արհեստակցական կազմակերպության նախագահի հետ կնքում է կոլեկտիվ պայմանագիր.

17) կասեցնում է ԲՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման մարմինների այն որոշումները, որոնք չեն բխում նրանց իրավասությունից, հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու սույն կանոնադրությանը և նշանակում է դրանց վերաքննարկում.

18) իր բացակայության ժամանակ ռեկտորի պարտականությունների կատարումը հանձնարարում է պրոռեկտորներից մեկին.

19) տալիս է ԲՊՀ-ի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով, բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

20) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և ԲՊՀ-ի կառավարման այլ մարմիններին չվերապահված լիազորություններ.

21) գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում ըստ մասնագիտությունների ուսման վարձավճարի չափը.

22) ձևավորում է ռեկտորին կից խորհրդատվական մարմիններ, սահմանում է դրանց կազմն ու լիազորությունները:

56. Ռեկտորի պաշտոնում կարող է ընտրվել Հայաստանի Հանրապետության գործունակ չափահաս այն քաղաքացին, որն ունի գիտական աստիճան և առնվազն հինգ տարվա ակադեմիական և գիտական գործունեության ստաժ:

(փոփոխությունը կարարված է ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի 07.10.2021թ. կայացած նիստի որոշմամբ (արձանագրություն թիվ 6) և գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 20.10.2021թ.):

57. Ռեկտորն ընտրվում է բաց մրցույթով՝ հոգաբարձուների խորհրդի նիստում, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Ռեկտորի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով հավաքել է խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայն:

58. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ռեկտորի պաշտոնում:

59. Ռեկտորի ընտրության արդյունքները հաստատում է հիմնադիրը: Արդյունքներն անվավեր ճանաչելու դեպքում, համաձայն գործող կարգի, նշանակվում է ռեկտորի նոր ընտրություն: Եթե նույն թեկնածուն ընտրություններում հավաքում է խորհրդի անդամների ձայների առնվազն երկու երրորդը, ապա հիմնադիրը հաստատում է խորհրդի որոշումը:

60. Ռեկտոր ընտրված անձի լիազորությունները դադարեցվում են օրենքով սահմանված կարգով՝ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, եթե՝

1) նա դիմում է դրա մասին.

2) նա իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.

3) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած:

61. ԲՊՀ-ի ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որը ձևավորվում է ԲՊՀ-ի ռեկտորի հրամանով: ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի և ԲՊՀ-ի գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ռեկտորատը քննարկում է ԲՊՀ-ի գործունեության ոլորտներին վերաբերող հարցեր և դրանց վերաբերվող որոշումները ներկայացնում է ռեկտորի հաստատմանը: Ռեկտորատի անվանական կազմը հաստատում է ԲՊՀ-ի ռեկտորը:

62. Պրոռեկտորներն իրականացնում են ԲՊՀ-ի գործունեության որոշակի ոլորտի անմիջական ղեկավարում՝ ռեկտորի հանձնարարություններին, հրամաններին և կարգադրություններին համապատասխան:

VII. ԲՊՀ-Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

63. ԲՊՀ-ի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարել կարող է ինչպես ԲՊՀ-ի հիմնադիրը, այնպես էլ՝ ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհուրդը՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

64. ԲՊՀ-ի կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները չեն կարող վերաբերել ԲՊՀ-ի նպատակներին կամ շահառուներին:

VIII. ԲՊՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

65. ԲՊՀ-ն ինքնուրույն պլանավորում է իր գործունեությունը, մշակում զարգացման հեռանկարները և ընդունում իր գործունեության վերաբերյալ որոշումներ:

66. ԲՊՀ-ի և այլ իրավաբանական, ֆիզիկական անձանց հետ գործունեության բոլոր հարաբերություններն իրականացվում են պայմանագրային հիմունքներով:

67. ԲՊՀ-ն ինքնուրույն է ընտրում իր կողմից կնքվող պայմանագրերի առարկան և պայմանները:

68. Իր կանոնադրական գործունեությունն իրականացնելիս ԲՊՀ-ն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ ընդունելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող ցանկացած որոշում:

69. ԲՊՀ-ն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնում է միայն այն դեպքերում, երբ դա համապատասխանում է իր կանոնադրությանը կամ ծառայում իր կանոնադրական նպատակների իրականացմանը: ԲՊՀ-ն կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել ինքնուրույն կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ, կամ լինել դրանց մասնակից: ԲՊՀ-ի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակները սահմանվում են ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

70. Հիմնադրի կողմից ԲՊՀ-ին՝ որպես հիմնադրի ներդրում հանձնված գույքը ԲՊՀ-ի սեփականությունն է: ԲՊՀ-ն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված կարգով:

71. ԲՊՀ-ի սեփական միջոցներով ձեռք բերված գույքը և օրենքով սահմանված այլ աղբյուրներից ձևավորված գույքը ԲՊՀ-ի սեփականությունն են: ԲՊՀ-ն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված կարգով:

72. Այլ քաղաքացիների, կազմակերպությունների կողմից որպես կամավոր գույքային ներդրում հանձնված գույքը, ներառյալ դրամական միջոցները, բաժնետոմսերը, այլ արժեթղթեր և մտավոր սեփականության նկատմամբ իրավունքները ԲՊՀ-ի սեփականությունն են:

73. ԲՊՀ-ի սեփականությունը հանդիսացող և նրան օգտագործման հանձնված ընդհանուր ակտիվների արժեքի 20 տոկոսը գերազանցող գործարքները կնքվում են Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնությամբ:

74. ԲՊՀ-ի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ ԲՊՀ-ի մարմինների անդամների, ինչպես նաև ԲՊՀ-ի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և ԲՊՀ-ի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ ԲՊՀ-ի մարմինների անդամները, ինչպես նաև ԲՊՀ-ի աշխատողները կանոնադրությամբ նախատեսված շահառուներ են:

IX. ԲՊՀ-ՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

75. ԲՊՀ-ում կիրառվում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության եռաստիճան որակավորման համակարգը. բարձրագույն մասնագիտական կրթության երկաստիճան որակավորման համակարգում կրթությունն իրականացվում է բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով՝ Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակին համապատասխան: Ուսուցման յուրաքանչյուր աստիճանի շրջանավարտներին

տրվում է համապատասխան որակավորում և ավարտական փաստաթուղթ (դիպլոմ):

76. Դիմորդների՝ ԲՊՀ ընդունելությունը և սովորողի ուսուցման մեկ մակարդակից մյուսին անցումը կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

77. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ վճարովի հիմունքներով ուսուցումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

78. Լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագիրն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է ԲՊՀ-ի կողմից սահմանված նմուշի ավարտական փաստաթուղթ (վկայագիր, հավաստագիր):

79. ԲՊՀ-ում ուսուցումը կարող է իրականացվել առկա, հեռակա, դրսեկության և հեռավար ձևերով: Թույլատրելի է բարձրագույն և հետբուհական կրթություն ստանալու տարբեր ձևերի զուգակցումը:

80. ԲՊՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթության բազմաստիճան համակարգում ուսումնառությունն իրականացվում է կրեդիտների կուտակման և փոխանցման համաեվրոպական համակարգի դրույթներին համապատասխան:

81. ԲՊՀ-ում գործում է սովորողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ:

82. ԲՊՀ-ում գործում է որակի ներքին ապահովման և վերահսկման համակարգ՝ կրթության որակի շարունակական բարելավման նպատակով:

83. ԲՊՀ-ում ընդունելությունն ասպիրանտուրա իրականացվում է ըստ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորմամբ դիմորդների մրցութային ընդունելության քննությունների արդյունքների: Ընդունելության կարգը և մասնագիտությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

84. ԲՊՀ-ում գործում է գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհուրդ: Գիտական աստիճանները շնորհվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

85. ԲՊՀ-ում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներին կարող են մասնակցել ԲՊՀ-ի աշխատողները և սովորողները, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով հրավիրված այլ մասնագետներ:

86. ԲՊՀ-ն կազմակերպում և անցկացնում է գիտաժողովներ, համաժողովներ, խորհրդակցություններ, սեմինարներ, հրատարակում է գիտական պարբերականներ, ժողովածուներ, մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ:

87. ԲՊՀ-ի ուսումնական և գիտական գործունեությունը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից՝

- 1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից.
- 2) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հիմնարկների, կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց նվիրատվություններից, դրամաշնորհներից.
- 3) ԲՊՀ-ի վճարովի ծառայություններից ստացվող միջոցներից.
- 4) բարեգործական նպատակով տրամադրվող միջոցներից.

5) նախաձեռնողական հետազոտությունների համար նախատեսված միջոցներից.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

88. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով իրականացվող գիտահետազոտական, նախագծային, կոնստրուկտորական, փորձարարական և այլ աշխատանքների պլանավորումը, ֆինանսավորումը, հաշվետվությունն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

X. ԲՊՀ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

89. ԲՊՀ-ի կառուցվածքը հաստատում է հոգաբարձուների խորհուրդը:

90. ԲՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումներն են ինստիտուտները, ֆակուլտետները, ամբիոնները, վարչությունները, բաժինները, կենտրոնները, գիտաուսումնական կենտրոնները, լաբորատորիաները, գրադարանը:

91. ԲՊՀ-ն իր կազմի մեջ մտնող բոլոր ստորաբաժանումներով ուսումնական և գիտական ամբողջություն է, որի միասնությունն ապահովում է ուսումնական, կրթական և գիտահետազոտական գործընթացների կազմակերպում և իրականացում՝ նրա բոլոր ստորաբաժանումների պարտադիր մասնակցությամբ:

92. ԲՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանման կարգավիճակը և իրավասությունը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և ԲՊՀ-ի գիտական խորհրդի հաստատած կանոնակարգերով:

93. ԲՊՀ-ի ֆակուլտետը գործում է իր կանոնադրությանը համապատասխան:

94. Ֆակուլտետը, ելնելով իր կողմից իրականացվող ուսումնական, մանկավարժական, մեթոդական, գիտական, ուսումնաօժանդակ աշխատանքներից, ըստ սահմանված չափանիշների, կազմում է իր հաստիքացուցակի նախագիծը և ներկայացնում ԲՊՀ-ի ռեկտորին:

95. Ֆակուլտետը կազմված է ամբիոններից, լաբորատորիաներից և ուսումնական, գիտական ու օժանդակ այլ ստորաբաժանումներից:

96. Ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի խորհուրդը և դեկանը:

97. Ֆակուլտետի կառավարման կոլեգիալ մարմինը ֆակուլտետի խորհուրդն է, որի նախագահը ֆակուլտետի դեկանն է: Ֆակուլտետի խորհրդի կազմում ընդգրկվում են դեկանի տեղակալը (տեղակալները), ֆակուլտետի ամբիոնների վարիչները, ֆակուլտետի պրոֆեսորներ, դոցենտներ, ոլորտի այլ մասնագետներ, սովորողներ: Ֆակուլտետի խորհրդի անդամների թվի 25 տոկոսը սովորողներ են, որոնց առաջադրումն ու ընտրությունն իրականացնում է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը:

98. Որպես ֆակուլտետի կառավարման մարմնի՝ խորհրդի կազմի ձևավորման ու գործունեության կարգը սահմանվում է ԲՊՀ-ի ֆակուլտետի օրինակելի կանոնադրությամբ:

99. Ֆակուլտետի խորհուրդը՝

1) ԲՊՀ-ի ռեկտորին ներկայացնում է առաջարկություն ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ և կառուցվածքային այլ ստորաբաժանումներ ստեղծելու, լուծարելու, վերակազմավորելու վերաբերյալ.

2) ԲՊՀ-ի գիտական խորհրդի ընդունած օրինակելի կանոնադրության հիման վրա ընդունում է ֆակուլտետի կանոնադրությունը.

3) ընդունում է որոշում ֆակուլտետի կրթական, գիտական աշխատանքի, միջազգային կապերի և այլ հարցերի վերաբերյալ.

4) սահմանված կարգի համաձայն իրականացնում է ֆակուլտետի դեկանի, ամբիոնների վարիչների և պրոֆեսորադասախոսական համակազմի ընտրությունը.

5) լսում է ֆակուլտետի դեկանի ամենամյա հաշվետվությունը և գնահատում նրա գործունեությունը.

6) առաջադրում է ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդում և ԲՊՀ-ի գիտական խորհրդում ֆակուլտետի ներկայացուցիչների թեկնածուներին.

7) ԲՊՀ-ի ռեկտորին է ներկայացնում ֆակուլտետի ուսումնական պլանները՝ ԲՊՀ-ի գիտական խորհրդում հաստատելու համար.

8) լուծում է սույն կանոնադրությունից և ԲՊՀ-ի ներքին իրավական այլ ակտերից բխող ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեությանը վերաբերող այլ հարցեր:

100. Ֆակուլտետի խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում առնվազն 8 անգամ: Ֆակուլտետի խորհրդում որոշումներն ընդունվում են խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ կամ ֆակուլտետի կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Ֆակուլտետի խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի աշխատողների և սովորողների համար:

101. Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է ֆակուլտետի դեկանը՝ իր իրավասության սահմաններում և սույն կանոնադրության համաձայն:

102. Դեկանի ընտրությունը կազմակերպվում և իրականացվում է ԲՊՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատված դեկանների ընտրության կանոնակարգին համապատասխան:

103. Ֆակուլտետի դեկան կարող է ընտրվել գիտամանկավարժական աշխատանքային փորձ ունեցող այն անձը, ով ունի գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան:

104. Դեկանն ընտրվում է գիտական խորհրդում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ՝ 5 տարի ժամկետով: Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում ֆակուլտետի խորհրդում ամենաշատ, բայց մասնակիցների ձայների առնվազն կեսից ավելի ձայներ հավաքած թեկնածուն: Ընտրությունների արդյունքների հիման վրա ընտրված դեկանին պաշտոնի է նշանակում ԲՊՀ-ի ռեկտորը և սահմանված կարգով կնքում է պայմանագիր՝ 5 տարի ժամկետով: Դեկանն իր պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավելի, քան 2 ժամկետ անընդմեջ:

105. Ֆակուլտետի դեկանը՝

1) ղեկավարում է ֆակուլտետի կրթական, գիտական, միջազգային և այլ գործունեությունը.

2) ապահովում է ԲՊՀ-ի կառավարման մարմինների և ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը.

3) ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալի (տեղակալների) և ֆակուլտետի խորհրդի քարտուղարի թեկնածությունները.

4) սահմանված կարգով համալսարանի ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, հեռացնելու, վերականգնելու, համապատասխան արձակուրդ ձևակերպելու վերաբերյալ.

5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ֆակուլտետի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

106. Ֆակուլտետի խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ֆակուլտետին առնչվող ընթացիկ հարցերը քննարկվում և լուծվում են դեկանատի նիստում, դեկանի, դեկանի տեղակալի (տեղակալների), ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոնների վարիչների, ֆակուլտետի խորհրդի քարտուղարի, ուսանողական խորհրդի և ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահների մասնակցությամբ: Դեկանատի նիստերն արձանագրվում են:

107. Ամբիոնները (գիտաուսումնական կենտրոնները, բաժինները, լաբորատորիաները) ֆակուլտետի ուսումնագիտական գործընթացի կազմակերպման կառուցվածքային հիմնական ստորաբաժանումներն են, որոնք գործում են սույն կանոնադրության և ֆակուլտետների ամբիոնների ու գիտաուսումնական կենտրոնների կանոնադրությունների հիման վրա: Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը ձևավորվում է պրոֆեսորներից, դոցենտներից, ավագ դասախոսներից և դասախոսներից:

108. ԲՊՀ-ի ամբիոնները կարող են լինել նաև համահամալսարանական, որոնց գործունեության անմիջական համակարգումը կատարվում է համապատասխան պրոռեկտորի կողմից:

109. Ամբիոնը գործում է սույն կանոնադրությանը և ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան:

110. Ամբիոնը, ելնելով կատարվող մանկավարժական, գիտական, ուսումնաօժանդակ աշխատանքների ծավալից ու ձևերից, ըստ սահմանված չափանիշների, մշակում է իր աշխատողների ուսումնական բեռնվածությունը:

111. Ամբիոնում պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումը, նրանց և ԲՊՀ-ի միջև աշխատանքային հարաբերություններն իրականացվում են մրցութային կարգով, պայմանագրային հիմունքներով:

112. Ամբիոնը ղեկավարում է վարիչը, որն ընտրվում է բաց մրցույթի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, մինչև 5 տարի ժամկետով: Ընտրությունների արդյունքների հիման վրա ամբիոնի վարիչին պաշտոնի է նշանակում ռեկտորը: Ամբիոնի վարիչի ընտրությունը կազմակերպվում և իրականացվում է ԲՊՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատված՝ ամբիոնի վարիչի ընտրության կանոնակարգին համապատասխան: Ամբիոնի վարիչի գործունեությունը համարվում է գիտամանկավարժական աշխատանք: Ամբիոնի վարիչն իր պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավելի, քան 2 ժամկետ անընդմեջ:

113. Ամբիոնի ուսումնագիտական գործունեությանը վերաբերող հարցերը քննարկվում են ամբիոնի գիտամանկավարժական կազմի նիստում: Ամբիոնի

ուսումնաստանողակ համակազմի աշխատողներն ամբիոնի նիստին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

114. Ֆակուլտետի մյուս ստորաբաժանումների ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է ֆակուլտետի կանոնադրությամբ:

115. Գիտաուսումնական կենտրոնը ԲՊՀ-ի կանոնադրական խնդիրների և գործառույթների իրագործման նպատակով ստեղծված կառուցվածքային ստորաբաժանում է, որի գործունեության կարգը սահմանում է ԲՊՀ-ի գիտական խորհուրդը:

XI. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ

116. ԲՊՀ-ի աշխատողներն են՝ գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական համակազմը (ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս և գիտական աշխատողներ), ուսումնասօժանդակ, վարչատնտեսական, տեխնիկական և այլ տարակարգերի աշխատողներ:

117. ԲՊՀ-ի սովորողներն են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնառող ուսանողները և հետազոտողի կրթական ծրագրում (ասպիրանտներ) սովորող անձինք:

118. ԲՊՀ-ի աշխատողների և սովորողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ԲՊՀ-ի ներքին իրավական այլ ակտերով:

119. ԲՊՀ-ի աշխատողներն իրավունք ունեն՝

1) ընտրելու և ընտրվելու ԲՊՀ-ի պաշտոններում և կառավարման մարմիններում, ընդգրկվելու և մասնակցելու ԲՊՀ-ի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին՝ օրենքով, ԲՊՀ-ի կանոնադրությամբ և կոլեկտիվ պայմանագրերով սահմանված կարգով.

2) մասնակցելու ԲՊՀ-ի գործունեությանն առնչվող խնդիրների քննարկմանը.

3) ընտրելու ուսումնական գործընթացի դասավանդման մեթոդներ.

4) միավորվելու արհեստակցական կազմակերպություններում.

5) ԲՊՀ-ի կանոնադրությանը և կոլեկտիվ պայմանագրին համապատասխան՝ օգտվելու գրադարանների, տեղեկատվական պահոցների, ուսումնական և գիտական ստորաբաժանումների, ինչպես նաև սոցիալ-կենցաղային, բուժական ստորաբաժանումների, ուսումնաարտադրական բազաների, մարզաառողջարանային ճամբարի և այլ կառուցվածքային ստորաբաժանումների վճարովի և անվճար ծառայություններից.

6) օրենքով սահմանված կարգով բողոքարկելու ԲՊՀ-ի կառավարման մարմինների և համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների կողմից ընդունված ակտերը.

7) սահմանված կարգով ստանալու վճարվող կամ չվճարվող արձակուրդ.

8) ստանալու դրամական հատուցում՝ աշխատանքի ժամանակ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար.

9) նախատեսված ժամկետում և սահմանված չափով ստանալու աշխատավարձ, լրավճարներ, հավելավճարներ, ինչպես նաև՝ պարգևատրումներ և խրախուսումներ (ներառյալ դրամական)՝ օրենքով, սույն կանոնադրությամբ և ԲՊՀ-ի կոլեկտիվ պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով.

10) ունենալու կազմակերպական և նյութատեխնիկական համապատասխան պայմաններ՝ մասնագիտական և աշխատանքային գործունեության համար.

11) ըստ նախասիրությունների՝ կազմակերպելու և մասնակցելու ԲՊՀ-ում անցկացվող գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին.

12) ԲՊՀ-ի աշխատողներն ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված իրավունքներ:

13) ԲՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմը, գիտաշխատողներն ու սովորողներն օժտված են ակադեմիական ազատություններով:

120. ԲՊՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի բոլոր թափուր պաշտոնների նշանակումը կատարվում է ըստ աշխատանքային պայմանագրի, որը կնքվում է մինչև 5 տարի ժամկետով: Աշխատանքային պայմանագրի կնքմանը նախորդում է բաց մրցութային ընտրություն: Աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո գիտամանկավարժական կազմի աշխատողի հետ կարող է կնքվել նոր պայմանագիր՝ մինչև 1 տարի ժամկետով, առանց մրցութային ընտրության՝ պայմանագրային ժամկետում նրա գիտամանկավարժական գործունեության գնահատման հիման վրա:

121. ԲՊՀ-ի աշխատողները պարտավոր են՝

1) պահպանել և կատարել սույն կանոնադրությամբ, ԲՊՀ-ի ներքին կարգապահական կանոններով և ներքին իրավական այլ ակտերով սահմանված պահանջները:

2) կատարել ԲՊՀ-ի ղեկավար կազմի օրինական որոշումները՝ հրամանները, կարգադրությունները և հանձնարարականները:

3) ապահովել ուսումնական գործընթացի, գիտական հետազոտությունների արդյունավետությունը:

4) մշտապես բարձրացնել իրենց մասնագիտական որակավորումը, առնվազն յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ՝ սահմանված կարգով անցնել վերապատրաստում կամ որակավորման բարձրացում:

5) ձևավորել և զարգացնել սովորողների մասնագիտական որակները, դաստիարակել պատշաճ վարք ու վարվելակերպ, քաղաքացիական ակտիվ դիրքորոշում, հայրենասիրություն:

6) զարգացնել սովորողների ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունները:

7) պահպանել և նպատակային ու խնայողաբար օգտագործել ԲՊՀ-ի գույքը:

8) կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԲՊՀ-ի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և ԲՊՀ-ի ներքին իրավական այլ ակտերով նախատեսված պարտականություններ:

122. ԲՊՀ-ի գիտամանկավարժական աշխատողներն իրավունք ունեն՝

1) զբաղվելու իրենց մասնագիտական գործունեության կազմակերպման և նյութատեխնիկական ապահովման հարցերով:

2) գիտական հետազոտության ակադեմիական ազատության:

3) սեփական նախաձեռնությամբ հետազոտական թեմաներ ընտրելու և մշակելու ազատության:

4) պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսումնական դասընթացների բովանդակության, ծրագրերի ազատ որոշման:

5) իրենց անհատական առանձնահատկություններին համապատասխանող և ուսումնական գործընթացի բարձր որակն ապահովող նյութի շարադրման, դասավանդման մեթոդների և միջոցների ազատ ընտրության:

6) համատեղելու գիտական, մանկավարժական և այլ բնույթի աշխատանքներ:

123. ԲՊՀ-ի ուսանողներ և սովորողներ են համարվում սահմանված կարգով բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված, ռեկտորի կողմից հրամանագրված և բարձրագույն մասնագիտական կրթության կրթական որևէ ծրագրով ուսումնառող անձինք:

124. ԲՊՀ-ի սովորողներն իրավունք ունեն՝

1) սեփական հայեցողությամբ, ըստ նախասիրությունների և պահանջմունքների ընտրելու մասնագիտություն, ուսուցման ձև, զբաղվելու հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը.

2) ստանալու գիտության, տեխնիկայի և մշակույթի ժամանակակից մակարդակին համապատասխանող գիտելիքներ, հաճախելու ԲՊՀ-ում կարդացվող դասախոսություններին.

3) մասնակցելու իրենց կրթության բովանդակության ձևավորմանը (ընտրովի դասընթացների և մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները.

4) մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը.

5) բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից՝ յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է ԲՊՀ-ում՝ ըստ սահմանված կարգի.

6) հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական (զուգահեռ) ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ընդգրկվելու և մասնակցելու ԲՊՀ-ի կառավարման մարմինների աշխատանքներին.

8) օգտվելու ԲՊՀ-ի գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական, մարզական, առողջարանային, ուսումնաարտադրական և այլ ստորաբաժանումների ծառայություններից.

9) ըստ նախասիրությունների մասնակցելու ԲՊՀ-ում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին.

10) միավորվելու ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ միավորումներում.

11) բողոքարկելու ԲՊՀ-ի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

12) օգտվելու ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

13) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ԲՊՀ-ի կողմից սահմանված կարգով ստանալու պետական, անվանական, ինչպես նաև իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ, դրամաշնորհ, ինչպես նաև ուսանողական վարկ.

14) ծանոթանալու ԲՊՀ-ի սույն կանոնադրությանը և իրավական այլ փաստաթղթերի:

15) լիազորված մարմնի սահմանած կարգով, անհրաժեշտության դեպքում, ստանալու ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

16) ուսուցման առկա ձևով ուսումնառության դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում առնվազն յոթ շաբաթ ընդհանուր տևողությամբ երկու անգամ գտնվելու արձակուրդում՝ ԲՊՀ-ի ուսումնական գործունեության կազմակերպման ժամանակացույցի համաձայն:

17) սահմանված կարգով փոխադրվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ներառյալ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունները:

18) կրթական հիմնական ծրագիրը չավարտած ուսանողներն իրավունք ունեն ստանալու սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանք:

19) ուսման բարձր առաջադիմության, հասարակական ակտիվության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական և (կամ) նյութական խրախուսանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ԲՊՀ-ի կողմից սահմանված կարգով:

20) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված իրավունքներ:

125. Կրթությունն ընդհատած նախկին սովորողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի վերականգնվելու և շարունակելու ուսումնառությունը ԲՊՀ-ում:

126. Արգելվում է սովորողներին արտաուսումնական աշխատանքում ներգրավելը՝ առանց նրանց և (կամ) նրանց օրինական ներկայացուցիչների համաձայնության:

127. ԲՊՀ-ի սովորողները պարտավոր են՝

1) տիրապետել բարձրակարգ մասնագետի համար անհրաժեշտ գիտելիքներին և հմտություններին:

2) սահմանված ժամկետներում կատարել բոլոր ուսումնական առաջադրանքները:

3) կատարել սույն կանոնադրության, ԲՊՀ-ի ներքին կարգապահական կանոնների և ներքին իրավական ակտերի պահանջները:

4) հաճախել ուսումնական ծրագրերով նախատեսված դասընթացներին:

5) հոգատար վերաբերվել ԲՊՀ-ի գույքին:

6) բարձր պահել ԲՊՀ-ի պատիվն ու հեղինակությունը, պահպանել հասարակական համակեցության և բարոյականության նորմերը:

128. Ուսուցման վճարովի համակարգում սովորողները պարտավոր են՝

1) ժամանակին վճարել ուսման վարձավճարը. ուսման վարձավճարը ժամանակին չվճարելու դեպքում այդ սովորողը կարող է հեռացվել ԲՊՀ-ից:

2) կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԲՊՀ-ի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով, ԲՊՀ-ի ներքին իրավական այլ ակտերով և ուսումնառության պայմանների վերաբերյալ կնքված պայմանագրով նախատեսված պարտականություններ:

129. Սույն կանոնադրությամբ, ներքին իրավական այլ ակտերով սահմանված պարտականությունները չկատարած, անբավարար ակադեմիական առաջադիմություն ցուցաբերած, ԲՊՀ-ի ներքին կարգապահական կանոնները խախտած սովորողները ռեկտորի կամ նրա կողմից լիազորված անձի հրամանով կարող են ենթարկվել կարգապահական տույժերի, ընդհուպ մինչև ԲՊՀ-ից հեռացվելը:

130. ԲՊՀ-ի ուսանողական խորհուրդը ԲՊՀ-ում գործող ուսանողական կազմակերպություն է, որը սովորողների ինքնակառավարման, ընտրովի ներկայացուցչական մարմին է: Ուսանողական խորհրդի գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԲՊՀ-ի սույն կանոնադրությամբ և ուսանողական խորհրդի կանոնադրությամբ: ԲՊՀ-ի ուսանողական խորհրդի կանոնադրությունն ընդունվում է ուսանողական խորհրդի բարձրագույն ղեկավար մարմնի և հաստատվում լիազոր մարմնի կողմից:

131. ԲՊՀ-ի ուսանողական գիտական ընկերությունը ԲՊՀ-ում գործող ուսանողական կազմակերպություն է, որի նպատակը սովորողների գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը նպաստելն է: Ուսանողական գիտական ընկերության ստեղծման և գործունեության կարգը հաստատվում է լիազոր մարմնի կողմից:

132. ԲՊՀ-ի ունկնդիրներ են համարվում այն անձինք, ովքեր դրսեկության ձևով սովորում են նախապատրաստական բաժիններում, ինչպես նաև դասախոսները և գիտական աշխատողները, ովքեր մասնակցում են վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներին:

XII. ԲՊՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

133. ԲՊՀ-ի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

134. ԲՊՀ-ի կողմից «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջների կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավասու պետական այլ մարմիններ՝ ըստ իրենց իրավասությունների, ստուգումների և ուսումնասիրությունների՝ օրենքով նախատեսված ընթացակարգերով: ԲՊՀ-ի ֆինանսական գործունեությունը վերստուգվում է անկախ աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ անձի կողմից՝ առնվազն տարեկան մեկ անգամ: ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամների 1/3-ի պահանջով կարող է իրականացվել արտահերթ աուդիտ: Աուդիտ իրականացնող անձն ընտրվում է ԲՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների:

135. ԲՊՀ-ն յուրաքանչյուր տարի, հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (<http://www.azdarar.am>) պարտավոր է հրապարակել՝

1) հաշվետվություն իր գործունեության մասին, որը պետք է ներառի տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, տվյալ ֆինանսական տարվա ընթացքում օգտագործված միջոցների ընդհանուր չափի, հոգաբարձուների խորհրդի անդամների, ռեկտորի մասին և ԲՊՀ-ի աշխատակազմում ընդգրկված անձանց անուններն ու ազգանունները, եթե նրանք հաշվետու տարվա ընթացքում օգտվել են ԲՊՀ-ի միջոցներից և ծառայություններից.

2) ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը, եթե ԲՊՀ-ի ակտիվների արժեքը գերազանցում է 10 մլն դրամը:

XIII. ԲՊՀ-Ի ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԼՈՒՑԱՐՈՒՄԸ

136. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրամի՝ այլ հիմնադրամին միացման կամ այլ հիմնադրամի հետ միաձուլման ձևով:

137. ԲՊՀ-ն կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

138. ԲՊՀ-ի լուծարումը նրա գործունեության դադարումն է՝ առանց նրա իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

139. ԲՊՀ-ի լուծարման մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա: Հիմնադրամի անունից, որպես շահագրգիռ անձ, կարող է հանդես գալ հոգաբարձուների խորհուրդը:

140. ԲՊՀ-ն կարող է լուծարվել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, եթե՝

1) ԲՊՀ-ի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար, և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ.

2) իր գործունեությամբ ԲՊՀ-ն շեղվել է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներից.

3) հնարավոր չէ հասնել ԲՊՀ-ի նպատակներին և կատարել այդ նպատակների փոփոխությունները.

4) ԲՊՀ-ի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները.

5) ԲՊՀ-ն թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.

6) ԲՊՀ-ն ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ:

141. ԲՊՀ-ն կարող է լուծարվել նաև «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ դեպքերում:

142. Պարտատերերի պահանջների բավարարումից հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին ԲՊՀ-ն պարտատերերի նկատմամբ չունի պարտավորություններ, գույքն ուղղվում է ԲՊՀ-ի սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: